



Տարեկան  
Հաշվետվություն

| 2017

<b>ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈւՂԵՐՁ</b> .....	<b>2</b>
<b>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>3</b>
ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԿՆԱՐԿ	4
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ և ԱՐԺԵՔՆԵՐ	9
2017 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	10
2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	15
<b>ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ</b> .....	<b>18</b>
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	19
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ	20
ԲԱԺՆԵՏԵՐԵՐ և ՆԵՐԴՐՈՂՆԵՐ	23
ԹԻՄ	29
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	32
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>33</b>
ԱՆԿԱՆ ԱՌԻԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	34
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39



## Վարդան Դիլանյան

«Այդի Բանկ» ՓԲԸ  
Խորհրդի նախագահ

## Խորհրդի նախագահի ուղերձ

Հարգելի հաճախորդներ, ներդրողներ և գործընկերներ,

2017 թվականը բեկումնային տարի էր Բանկում տեղի ունեցած փոփոխությունների տեսանկյունից: Մենք ընտրել էինք IDBank-ի խորը արդիականացման ուղին, որպեսզի ապահովենք հաճախորդների որակյալ սպասարկում, նորարարություններ եւ զգալի առաջընթաց թվայնացման ոլորտում: Արագ փոփոխվող աշխարհը ֆինանսական կառույցների առջև լուրջ մարտահրավերներ է առաջ բերում, և մենք IDBank-ում գիտենք, թե ինչպես պետք է դիմակայել այդ մարտահրավերներին:

Մենք ծագում ենք դառնալ առաջին ընտրության Բանկ (First Choice Bank) մեր հաճախորդների համար՝ որպես լավագույն նորարար Բանկ: Այս ճանապարհին անհրաժեշտ էր փոխել Բանկի գործող կառավարման մոդելը, ուստի ստեղծվեցին Գործառնական և Թվային բանկինգի տնօրինությունները՝ հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակի կտրուկ բարձրացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությամբ պայմանավորված:

2017 թվականին Բանկը շարունակել է իր ակտիվ գործունեությունը նաև ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտում՝ թողարկելով պարտատոմսերի 4 տրանշ, որոնք տեղաբաշխվել են նախատեսված ժամկետներից շուտ:

Ուրախությամբ կարող եմ փաստել, որ IDBank-ը բարելավել է առաջատար դիրքերը Հայաստանի բանկային համակարգում:

Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը մեր հաճախորդներին, ներդրողներին, գործընկերներին և աշխատակիցներին վստահության և փոխշահավետ համագործակցության համար: Մենք մտադիր ենք շարունակել IDBank-ի արդիականացման գործընթացը, որպեսզի հասնենք մեր նպատակների իրականացմանը, և ես համոզված եմ, որ 2018 թ. բոլորս տեսնելու ենք մեր նախաձեռնությունների առաջին հաջողված արդյունքները:

Հարգանքով՝

Վ. Դիլանյան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գլխուխ

## Արտաքին միջավայրի ակնարկ

### Տնտեսական զարգացումներ\*

2017 թվականին համաշխարհային տնտեսությունում արձանագրվել է աճի միտում պայմանավորված զարգացած և զարգացող երկրներում իրականացվող խթանող դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականություններով, ինչպես նաև ներդրումների և արտահանման աճով:


Ըստ ԱՄՅ հրապարակված ցուցանիշների՝ համաշխարհային տնտեսական աճը 2017 թվականին կազմել է 3.8% (2016 թվականին գրանցվել է 3.2 % տնտեսական աճ):

Տնտեսության աճի միտումը իր ազդեցությունն է թողել նաև գնագոյացման վրա, որի հետևանքով զարգացած երկրներում գնաճը կազմել է 1.7%, իսկ զարգացող երկրներում 4.0%:

ՀՀ-ում նույնպես արձանագրվել է տնտեսական աճ, որը կազմել է 7.5%: Աճել են հիմնականում արդյունաբերության և ծառայությունների ոլորտները, ինչը հետևանք է արտաքին և ներքին պահանջարկի ցուցանիշների աճի: Գյուղատնտեսության ոլորտում նկատվել է տնտեսական ակտիվության նվազում:

Տնտեսական աճը հանգեցրել է ինչպես տնային տնտեսությունների եկամուտների, այնպես էլ վարկային բեռի աճի:

### Համախառն ներքին արդյունք և տնտեսական աճ



Գնաճը ՀՀ-ում կազմել է 2.6%՝ մնալով նպատակային միջակայքի սահմաններում:

2017 թվականին ՀՀ արժույթային շուկայում տատանումները եղել են ցածր, իսկ ՀՀ դրամը արժեզրկվել է հիմնական արժույթների նկատմամբ:


### Բանկային համակարգի զարգացումները

Տնտեսական համակարգի զարգացումներն արտացոլվել են նաև բանկային համակարգի գործունեության վրա: Ներքին պահանջարկի աճը նպաստել է վարկավորման ծավալի աճին և բանկային համակարգի վարկային պորտֆելի որակի բարելավմանը: Բանկային համակարգի չափսատող վարկերի տեսակարար կշիռը նվազել է կազմելով 5.1%:

\*Տնտեսական և բանկային համակարգի զարգացումներ վերլուծություններում օգտագործվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալները:

Վարկային առաջարկի աճը պայմանավորված է տնտեսական բարձր ակտիվությամբ և առևտրային բանկերի միջև մրցակցության բարձր մակարդակով: Մրցակցության արդյունքում բարելավվել են վարկավորման պայմանները և պարզեցվել են վարկերի տրամադրման ընթացակարգերը՝ նպատակ ունենալով ներգրավել առավել մեծ թվով հաճախորդներ:


**Բանկային համակարգի ավանդներ և վարկեր, մլրդ. ՀՀ դրամ**



Այս ամենի վրա իր ազդեցությունն է թողել նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը (2017 թվականի փետրվարին ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը 6.25%-ից իջեցրել է 6.0%):

Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2017 թվականին կազմել է 78.2 % (ֆինանսական համակարգի ակտիվների 85.5%-ը բաժին է ընկնում բանկային համակարգին), իսկ վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 45.1%:

**Բանկային համակարգի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, %**




**Բանկի մրցակցային դիրքերը**

2017 թվականին տնտեսական ակտիվության վերականգնման պայմաններում բանկերը շարունակել են վարել վարկային ընդլայնողական քաղաքականություն: Բանկային համակարգի\* ակտիվների ծավալը 2017 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 7.7%-ով՝ կազմելով 4,329 մլրդ. ՀՀ դրամ: Ընդ որում, 5 խոշոր բանկերի ակտիվների մասնաբաժինը ընդհանուր

\*Բանկի մրցակցային դիրքերը վերլուծությունում օգտագործվել են ՀՀ բանկերի կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

բանկային համակարգի ակտիվներում կազմել է 55.0%: Ընդամենը ակտիվների մեծությամբ 2017 թվականին Բանկը զբաղեցրել է 14-րդ հորիզոնականը՝ բանկային համակարգում 3.0% մասնաբաժնով:


**Ընդամենը ակտիվներ**



2017 թվականին բանկային համակարգի ակտիվների 61.1% կազմել են հաճախորդներին տրված վարկերը: Այս ցուցանիշը Նախորդ տարվա համեմատ աճել է 5.0%-ով՝ կազմելով 2,645 մլրդ. ՀՀ դրամ:

Հաճախորդներին տրված վարկերի մեծությամբ 2017 թվականին Բանկը զբաղեցրել է 14-րդ հորիզոնականը՝ բանկային համակարգում 2.2% մասնաբաժնով:


**Հաճախորդներին տրված վարկեր**



2017 թվականին Բանկային համակարգի ընդամենը պարտավորությունների ծավալը աճել է 2016 թվականի նկատմամբ 8.2%-ով՝ կազմելով 3,634 մլրդ. ՀՀ դրամ: Ընդ որում, 5 խոշոր բանկերի պարտավորությունների մասնաբաժինը ընդհանուր բանկային համակարգի պարտավորություններում կազմել է 57.8%:

Ընդամենը պարտավորությունների մեծությամբ 2017 թվականին Բանկը զբաղեցրել է 14-րդ հորիզոնականը՝ բանկային համակարգում 2.3% մասնաբաժնով:


### Ընդամենը պարտավորություններ



2017 թվականին Բանկային համակարգի ընդամենը պարտավորությունների 70.3%-ը կազմել են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը աճել է 12.6%-ով՝ կազմելով 2,553 մլրդ. ՀՀ դրամ:


Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների մեծությամբ 2017 թվականին Բանկը զբաղեցրել է 14-րդ հորիզոնականը՝ բանկային համակարգում 2.5% մասնաբաժնով:

### Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ



2017 թվականին բանկային համակարգի ընդամենը կապիտալը 2016 թվականի համեմատ աճել է 5.1%-ով: Ընդամենը կապիտալի մեծությամբ 2017 թվականին Բանկը զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը՝ բանկային համակարգի 6.4% մասնաբաժնով:


### Ընդամենը կապիտալ





Բանկային համակարգի զուտ շահույթը 2017 թվականին կազմել է 33,718 մլն. ՀՀ դրամ՝ Նախորդ տարվա համեմատ աճելով 2.3%-ով: Բանկը 1,847 մլն. ՀՀ դրամ զուտ շահույթի մեծությամբ 2017 թվականին զբաղեցրել է 9-րդ հորիզոնականը՝ բանկային համակարգում 5.5% մասնաբաժնով: Ընդ որում Բանկի զուտ շահույթը 2017 թվականին Նախորդ տարվա նկատմամբ աճել է 65.4%-ով:

### Զուտ շահույթ



## Առաքելություն և արժեքներ

2017 թվականը դարձավ նշանակալի տարի Բանկի համար. Բանկը որդեգրեց թվային բանկինգի ձևափոխման ռազմավարություն և իրականացրեց ավանդական բանկինգից դեպի թվային անցման առաջին քայլերը: Այս ճանապարհին Բանկը շարունակում է կարևորել իր հաճախորդների և գործընկերների հետ վստահելի և կայուն հարաբերությունների ստեղծումը և պահպանումը, ինչը արտացոլվում է Բանկի առաքելությունում, տեսլականում և արժեքներում:

### ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար՝ որպես լավագույն Նորարար Բանկ:

### ՏԵՍԼԱԿԱՆ

Դառնալ առաջատար բանկ ՀՀ ֆինանսական համակարգում հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ:

### ԱՐԺԵՔՆԵՐ

#### Մենք Նորարար ենք

Մենք կարևորում ենք մեր հաճախորդների պահանջմունքները՝ ստեղծելով Նորարարական էկոհամակարգ:

#### Մենք թափանցիկ ենք

Մենք կարևորում ենք թափանցիկությունը մեր հաճախորդների, ներդրողների և հանրության նկատմամբ՝ բանկային գործունեությունն իրականացնելով լավագույն միջազգային կորպորատիվ չափանիշներին համապատասխան:

#### Մենք վստահելի ենք

Մենք կարևորում ենք մեր հաճախորդների և գործընկերների վստահությունը՝ համագործակցելով Նրանց հետ որպես հուսալի գործընկեր:

#### Մենք հավատարիմ ենք

Մենք կարևորում ենք մեր հաճախորդների և աշխատողների հավատարմությունը՝ Նրանց համար ապահովելով կայուն մրցակցային առավելություններ:


#### Մենք թիմային ենք

Մենք կարևորում ենք մեր աշխատակիցների միջև ներդաշնակ համագործակցությունը՝ հանուն ընդհանուր արդյունքի:


## 2017 թվականի ռազմավարական արդյունքները

2017 թվականին Բանկը ամփոփել է 1,847 մլն. ՀՀ դրամ զուտ շահույթի մեծությամբ (հաշվարկված ըստ ՖՀՄՍ), որը գերազանցում է 2016 թվականին արձանագրած ցուցանիշը 65.4%-ով (2016 թվականի այդ ցուցանիշը կազմել էր 1,117 մլն. ՀՀ դրամ): Բանկի գործառնական եկամուտները՝ մինչև զուտ արժեզրկումից կորուստների նվազեցումը, նախորդ տարվա նկատմամբ աճել են 71.6%-ով մինչև 10,935 մլն. ՀՀ դրամ՝ մեծամասամբ ի հաշիվ զուտ տոկոսային եկամուտների աճի:

**Զուտ շահույթ, մլն. ՀՀ դրամ**



**Զուտ տոկոսային եկամուտ, մլն. ՀՀ դրամ**




2017 թվականին Բանկի ակտիվները նվազել են 54.4%-ով՝ կազմելով 128,858 մլն. ՀՀ դրամ:


Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2017 թվականի 4-րդ եռամսյակում Բանկը ժամանակավորապես դադարեցրեց միջազգային շուկայի ֆինանսավորումը և խոշոր ներդրումային նախագծերը՝ շեշտը դնելով հայկական շուկայի զարգացման և ֆինանսավորման վրա՝ այս ամենով զսպելով հնարավոր ռիսկերը:

Նշված քաղաքականության արդյունքում որոշակիորեն նվազեցին վարկային ներդրումների ծավալը և փոփոխվեց ակտիվների կառուցվածքը:

**Ակտիվների կառուցվածք | 2017թ., %**



**Ակտիվների կառուցվածք | 2016թ., %**




2017 թվականին ակտիվների կառուցվածքում նվազել է հաճախորդներին տրված վարկերի մասնաբաժինը մինչև 44.8%:

Նույն ժամանակահատվածում հրացվելի ակտիվների մասնաբաժինը, որոնց մեջ ներառվում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխատվությունները, արժեթղթերի պորտֆելը, կազմել է 50.1%:


2017 թվականին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 57,764 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 73.4%-ով:

**Հաճախորդներին տրված վարկեր, մլն. ՀՀ դրամ**




Հաճախորդներին տրված համախառն վարկերի ծավալը 2017 թվականին նվազել է 71.6%-ով՝ կազմելով 62,023 մլն ՀՀ դրամ, որին մեծապես նպաստել է իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալի նվազումը: Արդյունքում փոխվել է համախառն վարկային պորտֆելի կառուցվածքը. անհատներին տրված վարկերի ծավալը կազմում է 43.8% (2016 թվականին՝ 12.8%), իսկ իրավաբանական անձանց՝ 56.2% (2016 թվականին՝ 87.2%):

**Համախառն վարկերի կառուցվածք | 2017թ., %**



**Համախառն վարկերի կառուցվածք | 2016թ., %**




Համախառն վարկային պորտֆելի պահուստի ծածկման գործակիցը 2017 թվականին աճել է 2016 թվականի նկատմամբ՝ տարեվերջին կազմելով 6.9%:

2017 թվականին Բանկի արժեթղթերի պորտֆելի աճել է 35.7%-ով՝ կազմելով 35,910 մլն. ԶՅ դրամ:


Արժեթղթերի պորտֆելի մեծամասամբ կազմված են պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներից (վերջիններիս մասնաբաժինը ընդհանուր արժեթղթերի պորտֆելում կազմել է 81.4%), որոնք հիմնականում կիրառվում են իրացվելիության կառավարման նպատակով:

2017 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր արժեթղթերի պորտֆելում էական մասնաբաժին են կազմում ԶՅ կառավարության արժեթղթերը՝ 62.9% (աճը՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 35.6%), իսկ կորպորատիվ պարտատոմսերի մասնաբաժինը՝ կազմում է 2.8% (աճը՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 188.6%):

**Արժեթղթերի պորտֆելի կառուցվածք | 2017թ., %**




**Արժեթղթերի պորտֆելի կառուցվածք | 2016թ., %**




Ընդհանուր առմամբ, 2017 թվականին Բանկի ընդամենը պարտավորությունները նվազել են 65%-ով՝ կազմելով 84,472 մլն. ԶՅ դրամ:


**Ընդամենը պարտավորություններ, մլն. ՀՀ դրամ**



**Ընթացիկ հաշիվներ և ցրահանջ ավանդներ, մլն. ՀՀ դրամ**



**Ժամկետային ավանդներ, մլն. ՀՀ դրամ**



## 2018-2020 թվականների ռազմավարական նպատակները

Բանկն իր ռազմավարությունը մշակելիս առաջնորդվում է Բանկի տեսլականի իրականացմանն ուղղված միջոցառումների իրագործմամբ:

2018 թվականի հունվարին Բանկի խորհուրդը հաստատեց Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը 2018-2020 թվականների համար՝ սահմանելով Բանկի զարգացման հստակ ռազմավարական առաջնահերթություններ:



### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Բանկի ռազմավարական զարգացման գլխավոր առաջնահերթություններից է ֆինանսական արդյունավետության ապահովումը՝ Բանկի գործունեությունը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշների շարունակական աճի ապահովման միջոցով:

Մասնավորապես Բանկի եռամյա ծրագրում թիրախավորել են հետևյալ ցուցանիշները.

**>8,500**

մլն. ՀՀ դրամ զուտ շահույթ 2020 թվականին;

**>15%**

կապիտալի շահութաբերության մակարդակ 2020 թվականին;

**>115,000**

մլն. ՀՀ դրամ վարկային պորտֆել 2020 թվականին:



### ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋՆԹԱՑ

Բանկը նախատեսում է առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաներ ներդնել Բանկի գործունեության բոլոր առանցքային ուղղություններում՝ ավտոմատացնելով մի շարք բիզնես գործընթացներ, միաժամանակ կարևորելով համակարգերի գործունեության կայունության բարձր մակարդակի ապահովումը:

Դեպի թվայնացում ուղղված իր ճանապարհին Բանկի կարևորագույն նպատակներից է հաճախորդների պահանջմունքների շուրջ թվային հարթակի կառուցումը և վերջինիս շարունակական զարգացման ապահովումը:





**ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԲԻԶՆԵՍՈՒՄ**

Ծրագրավորված ֆինանսական արդյունավետությանը Բանկը կարող է հասնել շնորհիվ հիմնական և աջակցող բիզնես ուղղությունների թվայնացման, նոր գործիքների ներդրման և կիրառման, գործունեության արդյունավետության բարձրացման: Այս նպատակով Բանկը նախատեսում է իրագործել մի շարք ծրագրեր, մասնավորապես.

- ✓ հաճախորդների հավատարմության ծրագրի ներդրում,
- ✓ իրավաբանական անձ հաճախորդների սպասարկման անհատական մենեջերների ինստիտուտի ներդրում,
- ✓ ֆիզիկական անձ հաճախորդների պահանջների հիման վրա թվային էկոհամակարգի մշակում,
- ✓ ամբողջապես նոր ֆունկցիոնալ հնարավորություններով, հաճախորդներին լիարժեք սպասարկումն ապահովող հիմնական գործիքակազմով, ժամանակակից լուծումներով ինտերնետ և մոբայլ բանկինգ հավելվածների գործարկում,
- ✓ անհատական պրոդուկտների առաջարկի (հաճախորդամետ լուծումների) ապահովում մեծ տվյալների մշակման և վերլուծության հիման վրա:
- ✓ հաճախորդների նոր ուղիներով և ձևաչափերով սպասարկման իրականացում, 24/7 ձևաչափով հեռահար ծառայությունների տրամադրում,
- ✓ ներդրումային պրոդուկտների նոր շարքի ներդրում իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների համար:
- ✓ ռիսկերի գնահատման ցուցանիշների ավտոմատացում և ներդրում, վարկային որոշումների ընդունման ավտոմատացում,
- ✓ մասնաճյուղային ցանցի օպտիմալացում, նորագույն ձևաչափով մասնաճյուղերի գործարկում, որպես ամբողջապես թվայնացված մասնաճյուղեր՝ ինքնասպասարկման սրահներով, նոր սերնդի ԱԳՄ-գանձապահ սարքերով, տերմինալներով և այլն,
- ✓ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի (CRM) ներդրում,
- ✓ թվային ուղիների շարունակական զարգացում՝ հաճախորդների հետ կայուն հարաբերություններ ձևավորելու և նոր թիրախային շուկաներ ներգրավելու նպատակով:



### ԻՄԻՋ և ԲՐԵՆՂԻ ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին հանդես գալով Նոր ապրանքային նշանով և բրենդով՝ Բանկը ներկայանալու է անհատական մոտեցմամբ, բարձր սպասարկման որակով և նորարար լուծումներով, առաջարկելով ամբողջովին Նոր բանկային միջավայր՝ մշտապես ձգտելով գերազանցել իր հաճախորդների ակնկալիքները:

Բանկի մարքեթինգային ռազմավարությունն ուղղված է առաջարկվող պրոդուկտների և ծառայությունների առաջխաղացմանը՝ օգտագործելով զանազան գործիքակազմ, այդ թվում՝ գովազդ, առցանց հաղորդակցություն, զանազան ակցիաների իրականացում և հատուկ առաջարկների ներկայացում:

Մշտապես բարձրացնելով բրենդի ճանաչելիությունը և ամրապնդելով Նոր իմիջի գաղափարախոսությունը՝ Բանկն իր եռամյա ծրագրում թիրախավորել է ՀՀ բանկերի շրջանակում առաջատար դիրքի գրավումը՝ որպես լավագույն նորարար թվային Բանկ:



### ԹԻՄ և ՄՃԱԿՈՒՅԹ

Բանկի ռազմավարությունը մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառում ուղղված է յուրաքանչյուր աշխատակցի պոտենցիալի բացահայտմանը, ինչը կոչված է խթանել Բանկի ներդաշնակ զարգացման ապահովմանը՝ ընտրված ռազմավարությանը համապատասխան:

Այս ուղղությամբ Բանկի համար առաջնային նպատակներից են ՏՏ ոլորտի մասնագետների ներգրավումը, երիտասարդ աշխատակիցների ներգրավման և մասնագիտական կողմնորոշմանն ուղղված համակարգի, աշխատակիցների լայն շրջանակի և հիմնական ղեկավար անձնակազմի համար երկարաժամկետ մոտիվացիոն համակարգերի ներդրում, նորարարությունների, բարելավումների և որոշումների կայացման գործընթացներում աշխատակիցների ներգրավվածության խթանումը, տաղանդների կառավարման համակարգի (Talent Management System) ներդրումը:

Մշտապես բարձր պահելով աշխատակիցների թիմային ոգին և առավելապես ճկուն դարձնելով ներքին մշակույթը՝ Բանկն իր եռամյա ծրագրում թիրախավորել է ՀՀ բանկերի շրջանակում առաջատար դիրքի գրավումը՝ որպես լավագույն գործատու երիտասարդ մասնագետների համար:

ԱՌԱՋՆԱՅԻՆ  
ՇԱՐԱՌՈՒՆԵՐ


Գլխուխ

## Հաճախորդներ

Բանկը հանդես է գալիս որպես ունիվերսալ բանկ՝ տրամադրելով ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների լայն շրջանակ թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական անձ հաճախորդներին պահանջմունքներին համապատասխան:

2017 թվականին Բանկը ներգրավել է ավելի քան 14,700 նոր հաճախորդ, որից ավելի քան 50%-ը մինչև 35 տարեկան հաճախորդներ են (2016 թվականին այս տարիքային խմբին պատկանող նոր հաճախորդների մասնաբաժինը այդ ժամանակահատվածում ներգրաված հաճախորդների քանակում կազմել էր շուրջ 48%) :

**2017 թվականին ներգրավված հաճախորդների կազմն տարիքի, %**




## Մասնաճյուղային ցանց


Բանկն իրականացնում է համալիր սպասարկում հաճախորդների հետ գործընկերային հարաբերությունների, պահանջված բանկային պրոդուկտների տրամադրման, ժամանակակից տեխնոլոգիական լուծումների, սպասարկման բարձր որակի, ռիսկերի պահպանողական քաղաքականության սկզբունքների հիման վրա մայրաքաղաք Երևանում և մարզերում առկա [14 մասնաճյուղերի միջոցով](#):

Բանկը ձգտում է ապահովել երկարաժամկետ և համաչափ աճ գործունեության բոլոր ուղղություններով բոլոր այն տարածաշրջաններում, որտեղ առկա են մասնաճյուղեր՝ միաժամանակ իրականացնելով մասնաճյուղային ցանցի գործունեության օպտիմալացում ինչպես նոր մասնաճյուղերի բացման, այնպես էլ պակաս արդյունավետ մասնաճյուղերի՝ դեպի առավել բարենպաստ դիրքեր տեղափոխության կամ փակման միջոցով:

### Հայաստանի Հանրապետություն



### Մայրաքաղաք Երևան



## Հաճախորդների հետ հարաբերություններ

Բանկային գործունեություն իրականացնելիս, ուղղորդվելով իր կողմից որդեգրված արժեքներով, Բանկը ձգտում է իր հաճախորդների համար դառնալ առավելապես արդյունավետ ֆինանսական գործընկեր:

Մշտապես կարևորելով հաճախորդների կարծիքը Բանկի կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ՝ Բանկը հաճախորդների հետ արագ և արդյունավետ հետադարձ կապ է ապահովում մի շարք ուղիներով, այդ թվում՝ Բանկի տարածքային ստորաբաժանումներում տեղադրված արկղիկների, սոցիալական ցանցերում Բանկի պաշտոնական էջերի, [support@idbank.am](mailto:support@idbank.am) էլեկտրոնային փոստի, հեռախոսազանգերի կենտրոնի, փոստային կապի միջոցով:

Բանկը մեծ կարևորություն է դարձնում հաճախորդների կողմից ներկայացված ցանկացած արձագանքին: Ստացված յուրաքանչյուր բողոք պատասխանատու աշխատակցի կողմից ուղղորդվում է համապատասխան ստորաբաժանումներ՝ հնարավորինս սեղմ ժամկետներում խնդրին լուծում տալու նպատակով:

2017 թվականին հաճախորդների կողմից Բանկին ներկայացվել են շուրջ 40 շնորհակալագիր և 120 բողոք:

2018 թվականի ընթացքում Բանկը նախատեսում է իրականացնել հաճախորդների սպասարկման որակի գնահատում հաճախորդներից հարցումներ իրականացնելով մասնաճյուղերում տեղադրված էլեկտրոնային համակարգերի միջոցով:

## Հաճախորդների սպասարկում

Հաճախորդների սպասարկման արդյունավետության բարձրացման նպատակով՝ 2017 թվականին Բանկում ներդրվեց հաճախորդների սպասարկման «Client Manager – Teller» ինստիտուտը: Հաճախորդների մենեջերների (Client managers) և սպասարկման բաժնի աշխատակիցների (Tellers) գործառնությունների ստանդարտացումը, օպտիմալացումը, հստակ առանձնացումը, սպասարկման սրահների գոտիավորման բարելավումը նպաստում են Բանկի մասնաճյուղերում հաճախորդների սպասարկման որակի բարձրացմանը:

2017 թվականին Բանկը ստացել է ISO 9001:2015 Որակի կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատ, ինչը հավաստում է ընկերությունը հաճախորդամետ է և հետևողականորեն մատուցում է ծառայություններ, որոնք համապատասխանում են օրենսդրական և կարգավորող պահանջներին և անընդհատ կատարելագործում է հաճախորդների սպասարկման որակը՝ բարձրացնելով հաճախորդների գոհունակությունը, ինչպես նաև անընդհատ կատարելագործելով ընկերության գործառնությունները:

### Privilege Banking ծառայություններ

2017 թվականի դեկտեմբերին Բանկում կազմավորվեց Անհատական բանկային ծառայությունների բաժին՝ արտոնյալ հաճախորդներին անհատական սպասարկում իրականացնելու և Privilege banking ծառայություններ տրամադրելու նպատակով:

Privilege banking ծառայությունների փաթեթը ներառում է սպասարկում հարմարավետ միջավայրում, անհատական խորհրդատուի ծառայություն, հատուկ սակագներ մի շարք պրոդուկտների և բանկային ծառայությունների համար, ճամփորդական ապահովագրություն և այլն:




## Բաժնետերեր և Ներդրողներ

Բանկը կարևորում է իր բաժնետերերի, ինչպես նաև ներդրողների շահերը և իրավունքները՝ նրանց համար ստեղծելով բարենպաստ պայմաններ, ապահովելով տեղեկատվության թափանցիկություն և ներդրումային գրավչություն:

### Բաժնետերեր

2016 թվականին Բանկի բաժնետերերի կառուցվածքում ներգրավվել է նոր բաժնետեր՝ «Ֆիստոք» Էլ Թի Դի ընկերությունը, որի արդյունքում 2016 թվական դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնեմասնակցության հարաբերակցությունը կազմել է հետևյալը՝ «Ֆիստոք» Էլ Թի Դի՝ 59.7%, «Կրեդիտբանկ» Ս.Ա.Լ.՝ 40.3%: 2017 թվականի ընթացքում Բանկի կանոնադրական կապիտալի համալրում չի իրականացվել, և տարեվերջի դրությամբ կանոնադրական կապիտալի մեծությունը կազմել է 38,985 մլն. ՀՀ դրամ (31.12.2016թ. դրությամբ Բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 38,985 մլն. ՀՀ դրամ):

Կանոնադրական կապիտալի կառուցվածք | 2017թ., %



31.12.2017թ. դրությամբ Բանկի խորհուրդը կազմված է 5 անդամներից: Խորհրդի նախագահն է Վարդան Դիլանյանը:

### Կորպորատիվ կառավարման համակարգը

Բանկում գործող կորպորատիվ կառավարման համակարգը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև ժամանակի ընթացքում ապացուցել է իր արդյունավետությունը:

Բանկի գործունեության բոլոր ուղղությունների գործընթացների անընդհատությունը և զարգացումը ապահովելու նպատակով Բանկում գործում են Կորպորատիվ բիզնեսի, Մանրածախ բիզնեսի, Բիզնեսի զարգացման, Ֆինանսական, Ռիսկերի կառավարման, Գործառնական և Թվային բանկինգի տնօրինությունները:





2017 թվականին Բանկում առանձնացվեցին Գործառնական և Թվային բանկինգի տնօրինությունները: Գործառնական տնօրինության կազմավորումը պայմանավորված է հաճախորդների սպասարկման որակի, տարածքային ստորաբաժանումների կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Թվային բանկինգի տնօրինության կազմավորումը պայմանավորված է Բանկի դեպի թվայնացում ուղղված ռազմավարությամբ:

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման գործընթացները կազմակերպելու նպատակով Բանկում գործում են.

- | Խորհրդին կից ռիսկերի կառավարման կոմիտե
- | Ներքին աուդիտի գծով Խորհրդին կից հանձնաժողով
- | Գլխավոր վարկային կոմիտե
- | Բիզնես վարկերի կոմիտե
- | Մանրածախ վարկերի կոմիտե
- | Ներդրումային (ակտիվների և պարտավորությունների կառավարման) կոմիտե
- | Չաշխատող ակտիվների կոմիտեներ
- | Բիզնեսի զարգացման կոմիտե
- | Գնումների կոմիտե

Կոմիտեներից յուրաքանչյուրն իր իրավասությունների սահմաններում կայացնում է որոշումներ, իրականացնում է կայացված որոշումների կատարման գործընթացների նկատմամբ հսկողություն:

### Ներքին վերահսկողություն և ռիսկերի կառավարում

Բանկի գործունեության արդյունավետությունը ապահովելու հարցում էական նշանակություն ունի ներքին վերահսկողության համակարգի ճիշտ կազմակերպումը:

Բանկում ներդրված ռիսկերի կառավարման համակարգի հիմնական սկզբունքները և մոտեցումներն են.

- ▶ Բանկի նորմատիվային դաշտի համապատասխանության ապահովումը ՀՀ ԿԲ և միջազգային ֆինանսական կառույցների պահանջներին,
- ▶ Բանկի ներքին իրավական ակտերի համապատասխանության ապահովումը ՀՀ օրենսդրական պահանջներին,
- ▶ Բանկի կողմից իրականացվող գործընթացների անընդհատության ապահովումը,
- ▶ Բանկի ներքին և արտաքին շահերի բախման հնարավոր դեպքերի կանխարգելումը կամ նվազեցումը,
- ▶ Բանկի պրոդեքնիսիզ զարգացման ապահովումը,

- ▶ ռիսկերի նվազեցման նպատակով կրկնակի ստուգման, ռիսկերի կառավարման ժամանակակից համակարգերի և մոդելների օգտագործումը,
- ▶ ռիսկերի կառավարման համակարգում ռիսկերի բացահայտման, գնահատման/չափման/կանխատեսման, մշտադիտարկման և հաշվետվողականության փուլերի կիրառումը,
- ▶ Բանկի կառավարման մարմիններին Բանկի հետագա զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- ▶ հնարավոր սթրեսային սցենարների և սթրես թեստավորման մոդելների կիրառման միջոցով արտակարգ իրավիճակներում Բանկի կայունության ապահովումը:

Համապատասխանության և ներքին վերահսկողության համակարգի առջև դրված խնդիրների լուծման համար կիրառվում են հետևյալ քայլերը.

- ▶ Բանկի գործունեության՝ ՀՀ օրենսդրությանը և Բանկի իրավասու մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերին համապատասխանության վերահսկողությունը,
- ▶ հաշվետվությունների արդյունավետ համակարգի ստեղծմանը և վարմանը ուղղված միջոցառումների իրականացումը,
- ▶ Նոր օրենսդրական ակտերի՝ Բանկի գործունեության վրա ազդեցության գնահատումը,
- ▶ փողերի վազման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերին Բանկի ներգրավվածության բացահայտումը և դրանց դեմ ուղղված միջոցառումների իրականացումը,
- ▶ Բանկում իրականացվող գործարար գործընթացների և առկա խնդիրների ստուգումների կազմակերպումը:

## Ներքին աուդիտի ծառայություն

Բանկի ներքին աուդիտի ծառայությունը իրականացնում է իր գործունեությունը անկախության, անաչառության և օբյեկտիվության սկզբունքների հիման վրա և նպատակ ունի խթանել Բանկի ռազմավարությամբ հաստատված ծրագրերի իրականացումը:

Ներքին աուդիտի ծառայությունը անկախ է Բանկի այլ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, հաշվետու է Բանկի խորհրդին, իրականացնում է Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության ստուգում, գնահատում և բացահայտված խնդիրների լուծման մեխանիզմների մշակում:

## Ներդրողներ

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում ներդրումային ծառայությունների մատուցմանը և Նոր պրոդուկտների ներդրմանը՝ նպատակ ունենալով ներգրավել հավատարիմ ներդրողների՝ և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց:

2017 թվականին միջազգային Moody's Investors Service գործակալությունը Բանկին շնորհեց «երկարաժամկետ տեղական և արտարժույթային ավանդների» B2 վարկանիշ՝ կայուն հեռանկարով: Վարկանիշը շնորհվել է հաշվի առնելով Բանկի բավականին բարձր կապիտալի համարժեքությունը, շահութաբերության էական ավելացումը, ակտիվների բարձր որակը, ինչպես նաև իրացվելիության մակարդակը:


Բանկը 2016 թվականի նոյեմբերից անդամակցում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգին Հաշվի Օպերատորի և Կարգավորող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակով և մատուցում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից մատուցվող ծառայությունները, մասնավորապես՝ բաժնետիրական ընկերությունների ռեեստրի վարման և արժեթղթերի պահառության հետ կապված բոլոր ծառայությունները:

2017 թվականին Բանկը շարունակեց նախորդ տարեվերջին սկսած պարտատոմսերի թողարկման գործընթացը՝ հասարակությանն առաջարկելով ավանդից ավելի բարձր եկամտաբերությամբ և ավելի ճկուն գործիք:


Բանկն արդեն իսկ թողարկել է անվանական արժեկտրոնային դոլարային և դրամային պարտատոմսերի 5 տրանշ ընդհանուր՝ 20 մլն. ԱՄՆ դոլար և 1,000 մլն. ՀՀ դրամ ծավալներով, որոնք բոլորը տեղաբաշխվել են նշված ժամանակահատվածից շուտ և ցուցակվել են NASDAQ OMX Արմենիայում:

2017 թվականին Բանկը թողարկել է 15 մլն. ԱՄՆ դոլար և 1,000 մլն. ՀՀ դրամ անվանական արժեթղթով պարտատոմսեր, որի արդյունքում թողարկված պարտքային արժեթղթերի ծավալը 2017 թվականին աճել է ավելի քան 4.5 անգամ կազմելով 10,815 մլն. ՀՀ դրամ:


**Թողարկված պարտքային արժեթղթեր, մլն. ՀՀ դրամ**



Թողարկված պարտքային արժեթղթերի կառուցվածք | 2017թ., %



Թողարկված պարտքային արժեթղթերի կառուցվածք | 2016թ., %



Նպատակ ունենալով ներդրողների հետ ձևավորել երկարաժամկետ համագործակցային հարաբերություններ, Բանկը 2017 թվականին գործարկեց պարտատոմսերի գրավադրմամբ վարկերի տրամադրման գործընթացը:

Նոր պրոդուկտը հնարավորություն է տալիս ներդրողներին առանց պարտատոմսերը վաճառելու ներգրավել մատչելի տոկոսադրույթով դրամական միջոցներ:


## Թիմ

Բանկի զարգացման ճանապարհին առանցքային կարևորություն և անգնահատելի ներդրում են կատարում աշխատակիցները: Բանկը շարունակաբար բարելավում է մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացները՝ նպատակ ունենալով աշխատաշուկայում հաստատվել որպես գրավիչ և մրցունակ գործատու: Բանկում շատ մեծ ուշադրություն է հատկացվում կորպորատիվ մշակույթի զարգացմանը՝ ստեղծելով թիմային աշխատանքին և աշխատակիցների ինքնազարգացմանը նպաստող աշխատանքային միջավայր:


## Թիմի կառուցվածքը

2017 թվականի տարեվերջի դրությամբ Բանկի աշխատակիցների քանակը 2016 թվականի տարեվերջի նկատմամբ ավելացել է 44-ով կազմելով 386 հոգի, որից ղեկավարների քանակը կազմում է 86: Ընդ որում Բանկի թիմի կառուցվածքում էապես ավելացել է մինչև 35 տարեկան աշխատակիցների քանակը (61 հոգի), և նվազել է 51 տարեկան և ավելի աշխատակիցների քանակը (24 հոգի):

### Աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %




### Ղեկավար աշխատակիցների\* կազմն ըստ տարիքի, %




\*Բանկի ղեկավար աշխատակիցներ դիտարկվել են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվող բանկի ղեկավարներ անձինք:

Աշխատակիցների կազմն ըստ սեռի

37.6%  
2017թ.



62.4%  
2017թ.




39.2%  
2016թ.


60.8%  
2016թ.

Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի

67.4%  
2017թ.



32.6%  
2017թ.



69.9%  
2016թ.

30.1%  
2016թ.

## Աշխատանքի վարձատրություն և մոտիվացիա

Բանկը մշտապես բարելավում է աշխատակիցներին նյութական և ոչ նյութական խրախուսման համակարգը՝ ձգտելով ապահովել իր թիմի մասնագիտական պոտենցիալի իրագործմանը նպաստող միջավայր:

Բանկում սահմանված է աշխատանքի վարձատրության մրցունակ սանդղակ, գործում է պարզևատրման համակարգ գլխավոր կատարողականի ցուցանիշների (KPI) հաշվարկման մեխանիզմի միջոցով:

Բանկը կարևորելով իր աշխատակիցների և նրանց ընտանիքի բարեկեցությունը, ինչպես նաև հավատարիմ լինելով «Հոգատար Գործատու» սկզբունքին՝ նրանց տրամադրում է արտոնությունների փաթեթ, որը մշտապես թարմացվում է և ընդլայնվում: Մասնավորապես, փաթեթը ներառում է առողջության ապահովագրություն, զանազան սպորտային ակումբներին անդամակցություն, մի շարք ընկերությունների հետ ճկուն զեղչային համակարգի տրամադրում և այլն:

Բանկում իրականացվում են լավագույն աշխատակիցների ընտրության միջոցառումներ, որոնց արդյունքները ամփոփվում են տարեվերջին՝ նրանց տրամադրելով բարձր պրոֆեսիոնալիզմի և աշխատանքում լավագույն արդյունքների ցուցաբերման համար շնորհակալագրեր և զանազան նվերներ, այդ թվում հանգստյան ուղեգրեր Հայաստանում, Արցախում և արտերկրում:

## Մասնագիտական աճ

Կարևորելով աշխատակիցների մասնագիտական աճը՝ Բանկը մշտապես իրականացնում է աշխատակիցների վերապատրաստում թե՛ ներքին, թե՛ արտաքին ռեսուրսների միջոցով, որոնք նպաստում են թիմի ունակությունների, մասնագիտական գիտելիքների զարգացմանը՝ ֆինանսական ոլորտի կարևորագույն առաջընթացներին և նորամուծություններին համապատասխան:

Բանկը խրախուսում է բոլոր աշխատակիցներին լինել ակտիվ և կիսել իրենց աշխատանքային փորձն ու մասնագիտական գիտելիքները ներքին դասընթացների միջոցով, որոնք նպաստում են ոչ միայն նոր գիտելիքների ձեռքբերմանը, այլ նաև թիմային աշխատանքի և ոգու ամրապնդմանը:

## Համագործակցություն ԲՈՒՀ-երի հետ

Բանկն ակտիվ համագործակցում է մի շարք ԲՈՒՀ-երի, մասնավորապես՝ ԵՊՀ, ՀՊՏՀ, Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի շրջանավարտների և կարիերայի կենտրոնների հետ:

Համագործակցության արդյունքում 2017 թվականին Բանկի աշխատանքներում ներգրավվել են բազմաթիվ ուսանողներ, որոնց համար կազմակերպվել են գործնական ուսումնական դասընթացներ, իսկ լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսանողները ընդունվել են աշխատանքի Բանկում:



## Հասարակություն

2017 թվականին Բանկը շարունակել է իր գործունեությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համապատասխան:

### «Կրկին դարձնենք Հայաստանը մաքուր»

2017 թվականին Բանկը հանդիսացել է «Կրկին դարձնենք Հայաստանը մաքուր» (Make Armenia Clean Again) խորագրի ներքո կազմակերպվող շաբաթօրյակի հովանավորներից մեկը, որի շրջանակներում Բանկի աշխատակիցները մասնակցել են Երևան քաղաքի այգիներից մի քանիսի մաքրման և բարեկարգման աշխատանքներին:



### «Նվիրիր երազանք»

2017 թվականի տարեվերջին Բանկն իրականացրեց սոցիալական աջակցության ծրագիր՝ «Նվիրիր երազանք» խորագրով: Ծրագրի նպատակն էր Վանաձոր քաղաքի «Փոքրիկ Իշխան» ցերեկային կենտրոնի սոցիալապես անապահով և/կամ հաշմանդամություն ունեցող երեխաների համար ևմանորը դարձնել տոն, սերմանել սեր և բարություն՝ վերջիններիս ամանորյա երազանքները իրականացնելու միջոցով՝ Բանկի աշխատակիցների և հաճախորդների աջակցությամբ:

Երեխաներին նվերների հանձնումը կազմակերպվեց դեկտեմբերի 26-ին «Փոքրիկ Իշխան» ցերեկային կենտրոնում Բանկի աշխատակիցներից կազմված թիմի կողմից:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ

# Անկախ աուդիտորի եզրակացություն



«Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա» ՓԲԸ  
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,  
Վ. Սարգսյանի փ. 26/1,  
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ  
Հեռախոս + 374 (10) 566 762  
Ֆաքս + 374 (10) 566 762  
Ինտերնետ www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Անելիք Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

### Կարծիք

Մենք իրականացրել ենք «Անելիք Բանկ» ՓԲԸ-ի («Բանկ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

### Աուդիտի առնցքային հարցեր

Աուդիտի առնցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք մեր մասնագիտական կարծիքով, առավել էական նշանակություն ունեն հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար: Մենք անդրադարձել ենք այս հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակներում և վերջիններիս վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա» ՓԲԸ, 71 օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն,  
շփոթալական KPMG International Cooperative («KPMG International») կազմակերպության  
անդամակցող «Քեյ-Փի-Էն-Ջի» անբաժնի ֆինանսական ջանքի անդամ



«ԱՆԿԻՐ ԲԱՆԿ» ՓԲԸ  
ԱՆԿԱԽ ԲԱՆԿԻ ԱՌՈՂԻՏՈՐԱԿԱՆ ԵԳՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ  
Էջ 2

<b>Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում</b>	
Ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 14-ում:	
<b>Առևտրի առանցքային հարցեր</b>	<b>Ինչպես ենք ամրապահումք հարցին մեր առևտրի ընթացքում</b>
<p>Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ակտիվների ավելի քան 45%-ը և ճանաչվում են առանց հաշվի առնելու արժեզրկման գծով պահուստը, որը գնահատվում է կանոնավոր հիմունքով և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ:</p> <p>Արժեզրկման գծով պահուստի առանձին հիմունքով գնահատման համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, որոշելու համար, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ հայտանիշ, ինչպես նաև կատարել ենթադրություններ վարկառուների ֆինանսական վիճակի և դրամական միջոցների ակնկալվող հոսքերի վերաբերյալ:</p> <p>Արժեզրկված հիփոթեքային վարկերի և անշարժ գույքի վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատումը հիմնված է գրավի իրացումից ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վերլուծության վրա:</p> <p>Հավաքական հիմունքով արժեզրկման գծով պահուստը վերաբերում է անհատներին տրված գրավով չափահովված վարկերին և այդ վարկերի գծով կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասին:</p> <p>Այս հարցը հանդիսանում է առևտրի առանցքային հարց՝ պայմանավորված հաճախորդներին տրված վարկերի գումարի էական մեծությամբ և արժեզրկման պահուստի գնահատման հետ կապված անորոշությամբ:</p>	<p>Այս ոլորտում իրականացված մեր ընթացակարգերը ներառել են հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- գնահատվել և ստուգվել են Բանկի վարկերի արժեզրկման գործընթացի նկատմամբ գործող վերահսկողության մեխանիզմների կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը, ներառյալ՝             <ul style="list-style-type: none"> <li>- մոնիտորինգի գործընթացը վերահսկող համակարգը,</li> <li>- արժեզրկման գծով պահուստի հաշվարկի վերանայումը ղեկավարության կողմից,</li> <li>- ժամկետանց օրերի համակարգի հաշվարկի նկատմամբ գործող ծրագրի վերահսկող մեխանիզմները,</li> </ul> </li> <li>- առանձին վերցված նշանակալի վարկերի համար             <ul style="list-style-type: none"> <li>- վարկերի ընտրանքի համար իրականացվել է վարկային գնահատում, որոշելու համար, թե արդյոք վերջիններս ունեն արժեզրկման առանձին հայտանիշ,</li> <li>- որպես արժեզրկված դասակարգված վարկերի համար գնահատվել են վերականգնման ենթակա դրամական միջոցների հոսքերի ժամկետները և գումարը, այդ թվում՝ գրավի իրացման արժեքը: Կիրառելի լինելու դեպքերում, մենք ղեկավարության ենթադրությունները և գնահատումները համեմատել ենք արտաքին աղբյուրներից հասանելի տեղեկատվության հետ,</li> </ul> </li> <li>- անհատներին տրված վարկերի համար՝             <ul style="list-style-type: none"> <li>- ստուգվել է հավաքական հիմունքով արժեզրկման գծով պահուստի գնահատման մոդելները մուտքագրված առանցքային տվյալների ճշգրտությունը,</li> <li>- գնահատվել է արժեզրկման հաշվարկի մեթոդաբանության նպատակահարմարությունը,</li> <li>- արժեզրկված հիփոթեքային վարկերի և անշարժ գույքի գրավով վարկերի համար գնահատվել է գրավի իրացումից ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը:</li> </ul> </li> </ul>



**«Անելիք Բանկ» ՓԲԸ**  
 Անկախ անդիտորական եզրակացություն  
 էջ 3

	– գնահատվել է, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի են արտացոլում Բանկի ենթարկվածությունը վարկային ռիսկին:
--	---

<b>Պայմանական պարտավորություններ դատական վարույթների գծով</b>	
Ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 27-ում:	
<b>Աուդիտի առանցքային հարցեր</b>	<b>Ինչպես ենք անդրադարձել հարցին մեր աուդիտի ընթացքում</b>
<p>2018թ. մարտի 2-ին Առաջին ատյանի դատարանը բավարարել է Բանկի դեմ հարցուված հայցը: Դատարանի որոշման համաձայն՝ Բանկից պետք է զանձվի 22,301 հազար ԱՄՆ դոլար գումար:</p> <p>Գնահատելու համար, թե արդյոք պետք է ճանաչվի պահուստ դատական վարույթի գծով, ղեկավարությունը պետք է կատարի եական դատողություններ վարույթի հնարավոր արդյունքը որոշելու համար:</p>	<p>Այս ոլորտում իրականացված մեր ընթացակարգերը ներառել են հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> <li>– ուսումնասիրել ենք Բանկի և հայցվորի միջև կնքված պայմանագիրը, Առաջին ատյանի դատարանի որոշումը և Վերաքննիչ դատարան Բանկի ներկայացված բողոքարկման հիմքերը,</li> <li>– ներգրավվել ենք մեր ներքին իրավաբանին դատական վարույթի հնարավոր արդյունքի ղեկավարության վերլուծությունը գնահատելու համար,</li> <li>– գնահատել ենք դատական վարույթին վերաբերող բացահայտումների համապատասխանությունը:</li> </ul>

**Այլ տեղեկատվություն**

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր անդիտորական եզրակացությունը: Անկախվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ անդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկատվությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ ճշգրիտ ներկայացված չլինել:





«Անեյթ Բանկ» ՓԲԸ  
Անկախ անդիտորական եզրակացություն  
Էջ 4

**Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Բանկը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Ղեկավարման օղակներում ներգրավված անձից պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվառման գործընթացի վերահսկողության համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների անդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող անդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճանն է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն անդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող անդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թրեհավատություն անդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող անդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում անդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան մեր անդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում անդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին անդիտորական ընթացակարգեր մշակելու, այլ ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիքի արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:



«ԱՆԵԽ ԲԱՆԿ» ՓԲԸ  
Անկախ աուդիտորական եզրակացություն  
Էջ 5

- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միջև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

Ի փվս այլ հարցերի, մենք կտեղեկացնենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց նաև ներկայացնում ենք հայտարարություն առ այն, որ մենք հետևում ենք էթիկայի համապատասխան պահանջներին և տեղեկացնում ենք նրանց այն բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք խելամիտ կերպով կարող են համարվել որպես մեր անկախության վրա ազդեցություն ունեցող և, կիրառելի լինելու դեպքում, պաշտպանություն ապահովող համապատասխան միջոցների մասին:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել էական ազդեցություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար և, այդ իսկ պատճառով, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կանոնակարգով չի թույլատրվում հարցի հանրային բացահայտում, կամ երբ հազվադեպ դեպքերում մենք որոշում ենք, որ հարցը չպետք է ներկայացվի մեր եզրակացությունում, քանի որ ներկայացման բացասական հետևանքներն, ըստ ողջամիտ ակնկալիքների, կարող են գերակշռել ներկայացման հետ կապված հանրային հետաքրքրվածության առավելությունները:

Մեր անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

  
 Տիգրան Գասպարյան  
 Ղեկավար գործընկեր, «ՔԵՒՓԻ-ԵՆ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

«ՔԵՒՓԻ-ԵՆ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ  
25 ապրիլի 2018թ.




## Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթց.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	22,036,520	13,209,550
Տոկոսային ծախս	4	(13,454,144)	(8,840,711)
<b>Չուտ տոկոսային եկամուտ</b>		<b>8,582,376</b>	<b>4,368,839</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		559,827	593,583
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(310,229)	(227,589)
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ</b>		<b>249,598</b>	<b>365,994</b>
Չուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		(255,836)	36,454
Չուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից		468,190	256,737
Չուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	5	911,472	226,031
Չուտ այլ գործառնական եկամուտ	6	979,287	1,117,008
<b>Գործառնական եկամուտ</b>		<b>10,935,087</b>	<b>6,371,063</b>
Չուտ արժեքկումից կորուստ	7	(4,060,115)	(1,222,281)
Լնձնակազմի գծով ծախսեր		(2,814,399)	(2,046,670)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,683,991)	(1,631,711)
<b>Շահույթ մախքան շահութահարկով հարկումը</b>		<b>2,376,582</b>	<b>1,470,401</b>
Շահութահարկի գծով ծախս	9	(529,802)	(353,726)
<b>Շահույթ տարվա համար</b>		<b>1,846,780</b>	<b>1,116,675</b>
<b>Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի</b>			
<i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>			
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ</i>			
- Իրական արժեքի զուտ փոփոխություն	9	2,146,088	2,009,100
- Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն	9	(729,178)	(180,825)
<b>Այլ համապարփակ եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի</b>		<b>1,416,910</b>	<b>1,828,275</b>
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար</b>		<b>3,263,690</b>	<b>2,944,950</b>

8-ից 75-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018թ. ապրիլի 26-ին և ստորագրվել են վերջինիս անունից

Ռուբեն Մելիքյան  
Վարչության նախագահի  
Ժամանակավոր միաշտոնակատար

Անուշիկ Խաչատրյան  
Գլխավոր կազմակերպիչ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Օճք.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	17,229,253	30,061,489
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ			
- Բանկի կողմից պահվող		9,952	77,106
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	11	29,406,955	18,313,773
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	12	11,476,427	547,876
Հակադարձ հետզման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	13	6,493,486	7,722,510
Հաճախորդներին տրված վարկեր	14	57,763,789	217,036,997
Մյուս մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող		-	353,392
Ընթացիկ հարկային ակտիվ		142,648	30,444
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	15	5,034,278	4,824,406
Այլ ակտիվներ	16	1,301,201	3,485,291
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>128,857,989</b>	<b>282,453,284</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ		229,753	61,386
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	17	4,988,819	66,713,188
Թողարկված պարտային արժեթղթեր	18	10,815,059	2,428,223
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	64,651,008	167,523,458
Այլ փոխառություններ	20	1,357,706	3,262,564
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	1,486,487	604,942
Այլ պարտավորություններ	21	943,640	737,696
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>84,472,472</b>	<b>241,331,457</b>
<b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
Բաժնետիրական կապիտալ	22	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ		156,499	156,499
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		3,342,351	1,925,441
Զբաղիված շահույթ		1,900,718	53,938
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>44,385,517</b>	<b>41,121,827</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>128,857,989</b>	<b>282,453,284</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն  
2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾՈՔ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
<b>ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Ստացված տոկոսներ		23,815,358	12,485,353
Վճարված տոկոսներ		(14,586,776)	(7,139,046)
Ստացված կրմիսիոն և այլ վճարներ		559,827	593,583
Վճարված կրմիսիոն և այլ վճարներ		(310,229)	(227,589)
Ջուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(20,348)	20,734
Ջուտ մուտքեր արտարժույթային գործառնությունների գծով		343,087	430,045
Այլ ստացված եկամուտ		885,476	802,210
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(3,868,686)	(3,176,574)
<b>Գործառնական ակտիվների նվազում/աճ</b>		1,229,639	(7,718,919)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ			
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ		(10,886,898)	58,405
Հաճախորդներին տրված վարկեր		151,659,011	(157,539,942)
Այլ ակտիվներ		2,581,737	5,185,180
<b>Գործառնական պարտավորությունների (նվազում/աճ</b>			
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ		(61,167,608)	49,178,502
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		-	(300,000)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		(101,202,329)	111,453,079
Այլ պարտավորություններ		(30,021)	(5,596)
<b>Գործառնական գործունեության համար (օգուտգործված)/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը</b>		<b>(10,998,760)</b>	<b>4,099,425</b>
Վճարված շահութահարկ		(19,689)	(16,503)
<b>Գործառնական գործունեության համար (օգուտգործված)/գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր</b>		<b>(11,018,449)</b>	<b>4,082,922</b>
<b>ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում		(8,547,725)	(1,443,088)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառք և մարում		460,795	6,866,970
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերում		-	(19,943,793)
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների մարում		-	2,596,284
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(596,013)	(172,140)
<b>Ներդրումային գործունեության համար օգուտգործված դրամական միջոցների հոսքեր</b>		<b>(8,682,943)</b>	<b>(12,095,767)</b>
<b>ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Մուտքեր պարտքային արժեքի բողարկումից	18	8,336,627	2,418,311
Այլ փոխառությունների ստացում	20	414,599	1,792,112
Այլ փոխառությունների մարում	20	(2,305,099)	(2,501,791)
Մուտքեր բաժնետոմսերի բողարկումից		-	21,805,949
<b>Ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր</b>		<b>6,446,127</b>	<b>23,514,581</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ</b>		<b>(13,255,265)</b>	<b>15,501,736</b>
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		423,029	250,469
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		30,061,489	14,309,284
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ</b>	10	<b>17,229,253</b>	<b>30,061,489</b>

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրակ կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Ընդերքի վերագնահատումից	Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատմ. պահուստ	Գրաշված շահույթ/ (լրտասկված վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	13,696,300	3,483,700	156,499	97,166	(1,062,737)	16,370,928
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ</b>						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	1,116,675	1,116,675
<b>Այլ համապարփակ եկամուտ</b>						
Հուլիաներ, որոնք վերադասակարգված են կամ կայող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գոտ փոփոխություն առանց հետաձգված հարկի	-	-	-	2,009,100	-	2,009,100
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գոտ փոփոխություն առանց հետաձգված հարկի	-	-	-	(180,825)	-	(180,825)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,828,275	-	1,828,275
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար</b>				<b>1,828,275</b>	<b>1,116,675</b>	<b>2,944,950</b>
<b>Գործառնություններ</b>						
Սեփական մատերերի հետ՝ զրամցված ոտղակիորեն սեփական կապիտալում						
Թուլարկված բաժնետոմսեր	20,275,550	1,530,399	-	-	-	21,805,949
<b>Ընդամենը գործառնություններ սեփական մատերերի հետ</b>	<b>20,275,550</b>	<b>1,530,399</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>21,805,949</b>
<b>Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>33,971,850</b>	<b>5,014,099</b>	<b>156,499</b>	<b>1,925,441</b>	<b>53,938</b>	<b>41,121,827</b>
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	1,925,441	53,938	41,121,827
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ</b>						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	1,846,780	1,846,780
<b>Այլ համապարփակ եկամուտ</b>						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գոտ փոփոխություն առանց հետաձգված հարկի	-	-	-	2,146,088	-	2,146,088
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գոտ փոփոխություն առանց հետաձգված հարկի	-	-	-	(729,178)	-	(729,178)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,416,910	-	1,416,910
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար</b>				<b>1,416,910</b>	<b>1,846,780</b>	<b>3,263,690</b>
<b>Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>33,971,850</b>	<b>5,014,099</b>	<b>156,499</b>	<b>3,342,351</b>	<b>1,900,718</b>	<b>44,385,517</b>

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «Այրի Բանկ» ՓԲ ընկերությունը պետք է հրապարակի իր գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, Նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ («ՖՅՄՍ») պահանջների համաձայն:

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ, որոնք հրապարակված են Բանկի պաշտոնական կայքէջում ([www.idbank.am](http://www.idbank.am)):